ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անունը, ազգանունը

Տիգրան Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետը

2020թ. հուլիսի 24
Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ

4. Հրավիրող կողմը

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար

5. Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը

Տնտեսությանը, մասնավորապես, գյուղատնտեսության զարգացմանն առնչվող համատեղ ծրագրերի քննարկում:

6. Քննարկված թեմաները

- գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը,
- ագրարային բնագավառում իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները,
- պարենային ապահովության և անվտանգության խնդիրները,
- երկու հանրապետությունների գործընկեր կառույցների միջև փոխհամագործակցության խորացման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը

Այցի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանի գլխավորած պատվիրակությանն ընդունել է Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը: Արցախի նախագահը նշել է, որ փոխգործակցության հիմքում ունենալով ԱՀ և ՀՀ տնտեսությունների զարգացման հնարավորություններն ու հեռանկարները՝ առաջիկա տարիների տեսլականում շատ կարևոր է ուշադրությունը սևեռել պարենային ապահովության և անվտանգության խնդիրներին: ՀՀ էկոնոմիկայի նախարարն ընդգծել է, որ Արցախի գործընկերների հետ քննարկում են այն հիմնական ուղիները, որոնք հնարավորություն են տալու արդյունավետ կերպով ապահովել նախանշած արդյունքները: Այդ համատեքստում դիտարկվում են առկա ռեսուրսները և համեմատական առավելություններ ընձեռող գործոնները, որպեսզի հնարավոր լինի ապահովել առավելագույն արդյունավետություն:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև երկու կառավարությունների կողմից տնտեսվարող սուբյեկտների աջակցման նպատակով կիրառվող գործիքակազմերի ներդաշնակեցմանը և տնտեսական առաջնահերթություններին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Այցի շրջանակում տեղի է ունեցել Տիգրան Խաչատրյանի և ԱՀ գյուղատնտեսության նախարար Աշոտ Բախշիյանի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են երկու պետությունների գյուղատնտեսության ոլորտի առաջնահերթ ուղղություններին, պետական օժանդակության ծրագրերում կատարված փոփոխություններին ու լրամշակումներին, երկու գերատեսչությունների միջև գյուղատնտեսության բնագավառում համագործակցության հեռանկարներին և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ խնդիրներին վերաբերող հարցեր:

Նախարար Տիգրան Խաչատրյանն ընդգծել է, որ հանդիպման կարևոր նպատակներից է քննարկել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը, գույքագրել երկու կողմերում առկա օժանդակության գործիքակազմը և միասնական քայլերով, առկա մարտահրավերների հաղթահարման միջոցով հասնել ոլորտի առավել արդյունավետ զարգացմանը և պարենային անվտանգության ապահովմանը, որը երկու պետությունում հարկավոր է դիտարկել որպես ընդհանուր խնդիր:

ԱՀ գյուղատնտեսության նախարար Աշոտ Բախշիյանը նշել է, որ երկու պետությունների համար գյուղատնտեսութունը ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ճյուղ է և ներկայում Արցախի Հանրապետության գյուղատնտեսության առաջնային խնդիրներից է դեպի ոլորտ նոր ներդրումների ներգրավումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ և ԱՀ ագրարային բնագավառում իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները, ընդգծվել է երկու պետությունների ծրագրերը ներդաշնակեցնելու կարևորությունը: Առանձին անդրադարձ է կատարվել Հայաստանում մեկնարկած աշնանացան ցորենի արտադրության խթանման ծրագրին:

Նախարարները համակարծիք էին, որ ոլորտում մշակվող և իրականացվող պետական օժանդակության ծրագրերը պետք է ուղղվեն գյուղատնտեսության մեջ ներգրավված տնտեսվարողների շահութաբերության ավելացմանը և արտադրողականության բարձրացմանը:

Նախարարները շրջայց են կատարել «Ոսկե կաթիլ» ձեթի արտադրամասում, որտեղ արտադրվում է արևածաղկի, կտավատի, հլածուկի զտված և չզտված ձեթ: Շրջայցի ընթացքում հյուրերին ներկայացվել են առկա արտադրական հզորությունները, ընկերության առաջիկա ծրագրերը:

Այցի շրջանակներում կայացել է նաև հանդիպում Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար Լևոն Գրիգորյանի հետ: Քննարկվել են երկու նախարարությունների համագործակցությանն ուղղված ոլորտային հարցեր:

Նախարարներն ընդգծել են երկու հանրապետության գործընկեր կառույցների համագործակցության կարևորությունը և պայմանավորվածություն են ձեռք բերել՝ փոխադարձ այցերի և փոխհամագործակցության խորացման ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման շրջանակում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է մշակել և իրականացնել տեխնիկական ու գիտական համագործակցություն, իրագործել նախագծեր և ծրագրեր գյուղատնտեսության բնագավառում:

Փաստաթղթով նախատեսվում է երկկողմ համագործակցություն, մասնավորապես, պարենային անվտանգության ապահովման, Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի վերամշակման և իրացման աշխատանքների համատեղ պլանավորման, բուսաբուծության և պտղաբուծության, սերմնարտադրության, բանջարեղենի արտադրության, խաղողագործության և գինեգործության, անասնաբուծության և անասնաբուժության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԱՀ գյուղատնտեսության ոլորտի մասնագետների համատեղ վերապատրաստման և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին նրանց մասնակցության ապահովման, ագրոբիզնեսի հետազոտությունների իրականացման ոլորտներում, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող համագործակցության այլ ծրագրերի շրջանակում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- Երկու հանրապետության գործընկեր կառույցների համագործակցության խթանում՝ փոխադարձ այցերի և փոխհամագործակցության խորացման միջոցով,
- գյուղատնտեսության բնագավառում իրականացվող ծրագրերի ներդաշնակեցում

10. Գործուղվողները

ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի մամուլի քարտուղար Աննա Օհանյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

27.07.2020